# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 06 >> ապրիլի 2020թ. N ՄՊ/105-2020

ք. Արմավիր

### <<ԱՌԱՏԱՇԵՆԻ ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի ապրիլի 1-ի N ՄՊ/92-2020 և 2020 թվականի ապրիլի 1-ի N ՄՊ/93-2020 որոշումները, <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ռեփսիկ Ասատրյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի <<Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին>> N 298-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետով սահմանված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Invalid signature

X

VERIFIED OCSP 4/6/2020 17:23:28 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2020 թվականի ապրիլի 06-ի

[illegible] N 05-2020 որոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

| | |
|---|---|
| Գ. Գևորգյան - | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ |

**Անդամներ՝**

| | |
|---|---|
| Ս. Սաֆարյան - | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ |
| Ա. Խլղաթյան - | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար |

**Հանձնող՝**

| | |
|---|---|
| Սաակ Ղազարյան - | <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն |

**Ընդունող՝**

| | |
|---|---|
| Ելենա Եղիազարյան - | <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ.ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 06.04.2020 13:44:49 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217